**Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 1222/2009 (ԵՀ) կանոնակարգ**

**Վառելիքի արդյունավետության և այլ կարևոր պարամետրերի առումով անվադողերի պիտակավորման մասին**

**(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

**Պաշտոնական տեղեկագիր L 342 , 22/12/2009թ. էջ 0046 - 0058**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 95–րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը [1],

Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251–րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան [2],

Քանի որ

1) Կայուն շարժունակությունը Համայնքի առջև ծառացած հիմնական մարտահրավերն է կլիմայի փոփոխության լույսի ներքո և Եվրոպական մրցակցությունը պաշտպանելու անհրաժեշտությունից ելնելով, ինչպես նշված է Հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 8–ի «Կանաչ տրանսպորտ» վերնագրված հաղորդագրության մեջ,

2) 2006 թվականի հոկտեմբերի 19–ի Հանձնաժողովի «Էներգաարդյունավետությանն ուղղված գործողությունների պլանը– հասկանալ ներուժը» հաղորդագրությունը ընդգծել է 2020 թվականի դրությամբ ողջ էներգասպառումը 20 %–ով նվազեցնելու ներուժը՝ հստակ գործողությունների, ներառյալ անվադողերի պիտակավորման միջոցով,

3) 2007 թվականի փետրվարի 7–ի Հանձնաժողովի «Մարդատար ավտոմեքենաներից և թեթև առևտրային փոխադրամիջոցներից CO2–ի արտանետումները նվազեցնելու համայնքի ռազմավարության վերանայման արդյունքները» հաղորդագրությունը ընդգծել է CO2

արտանետումների նվազեցման ներուժը մեքենաների՝ վառելիքի սպառման վրա ամենամեծ ազդեցություն ունեցող մասերին, ինչպիսին են օրինակ անվադողերը, ուղղված լրացուցիչ միջոցների շնորհիվ,

4) անվադողերը, հիմնականում իրենց պտույտի հակազդման պատճառով, կազմում են ավտոմեքենաների կողմից վառելիքի սպառման 20 %–ից 30 %–ը: Անվադողերի պտույտի հակազդման կրճատումը այսպիսով կարող է նպաստել ճանապարհային տրանսպորտի էներգաարդյունավետությանը և արտանետումների կրճատմանը,

5) անվադողերը բնութագրվում են մի քանի իրար հետ փոխկապակցված պարամետրերով: Մեկ պարամետրի բարելավումը, ինչպիսին է պտույտի հակազդումը կարող է հակառակ ազդեցություն ունենալ այլ պարամետրերի վրա, ինչպիսին է թաց պայմաններում կցորդման մակարդակը, մինչդեռ թաց պայմաններում կցորդման մակարդակի բարելավումը կարող է հակառակ ազդեցություն ունենալ պտույտի արտաքին աղմուկի վրա: Անվադողերի արտադրողները պետք է խրախուսվեն, որ բոլոր պարամետրերը արդեն ձեռք բերված ստանդարտներից ավելի շատ օպտիմալացվեն:

6) վառելիքի արդյունավետություն ունեցող անվադողերը ծախսարդյունավետ են, քանի որ վառելիքի խնայողությունը փոխհատուցում է բարձր արտադրական ծախսերի պատճառով անվադողերի ավելացած գների համար,

7) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13–ի թիվ 661/2009 «Ավտոմեքենաների, դրանց կցավագոնների և համակարգերի, բաղադրիչները և դրանց համար նախատեսված [3] տեխնիկական առանձին մասերի տեսակների պահանջների մասին» կանոնակարգը (ԵՀ) սահմանում է անվադողերի պտույտին հակազդող նվազագույն պահանջները: Տեխնոլոգիական զարգացումները հնարավոր են դարձնում զգալիորեն նվազեցնել էներգիայի կորուստը այդ նվազագույն պահանջները գերազանցող անվադողերի պտույտի հակազդման շնորհիվ: Ճանապարհորդային տրանսպորտի կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու համար այսպիսով նպատակահարմար է սահմանել դրույթներ խրախուսելու վերջնական սպառողներին գնել վառելիքը խնայող անվադողեր՝ տրամադրելով այդ պարամետրի վերաբերյալ ներդաշնակեցված տեղեկատվությունը,

8) ճանապարհային աղմուկը մեծ անհարմարություն է և բացասական ազդեցություն ունի առողջության վրա: Թիվ 661/2009 կանոնակարգը (ԵՀ) սահմանում է նվազագույն պահանջներ անվադողերի պտույտի արտաքին աղմուկի պահանջների վերաբերյալ:

Տեխնոլոգիական զարգացումները հնարավոր են դարձնում զգալիորեն նվազեցնել այդ նվազագույն պահանջները գերազանցող պտույտի արտաքին աղմուկը: Ճանապարհային աղմուկը նվազեցնելու համար անհրաժեշտ է դրույթներ սահմանել խրախուսելու, որ վերջնական սպառողները անվադողեր գնեն պտույտի ցածր արտաքին աղմուկով՝ այդ պարամետրի վերաբերյալ ներդաշնակեցված տեղեկատվություն տրամադրելով,

9) Պտույտի արտաքին աղմուկի վերաբերյալ ներդաշնակեցված տեղեկատվության տրամադրումը նաև կնպաստի ճանապարհային աղմուկի դեմ ուղղված միջոցառումների իրականացմանը և ճանապարհային աղմուկի վրա անվադողերի ազդեցության վերաբերյալ տեղեկատվության բարձրացմանը «Շրջակա միջավայրի վրա աղմուկի գնահատման և կառավարման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հունիսի 25–ի 2002/49/ԵՀ հրահանգի շրջանակում,

10) թիվ 661/2009 (ԵՀ) կանոնակարգը սահմանում է նվազագույն պահանջներ անվադողերի՝ թաց պայմաններում կցորդման մակարդակի շահագործման պահանջների վերաբերյալ: Տեխնոլոգիական զարգացումները հնարավոր են դարձնում զգալիորեն բարելավել թաց պայմաններում կցորդման մակարդակը՝ գերազանցելով այդ նվազագույն պահանջները և այդպիսով կրճատելով արգելակման թաց տարածությունը: Ճանապարհային անվտանգությունը բարելավելու համար՝ անհրաժեշտ է դրույթներ սահմանել խրախուսելու, որ վերջնական սպառողներն անվադողեր գնեն թաց պայմաններում կցորդման բարձր մակարդակի շահագործմամբ՝ այդ պարամետրի վերաբերյալ ներդաշնակեցված տեղեկատվություն տրամադրելով,

11) թաց պայմաններում կցորդման մակարդակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը կարող է չներառել ձյան և սառը պայմանների համար նախատեսված անվադողերի առաջնային շահագործումը: Հաշվի առնելով այն փաստը, որ ներդաշնակեցված փորձաստուգման մեթոդները դեռևս հասանելի չեն այս անվադողերի համար՝ անհրաժեշտ է հնարավորություն ստեղծել հետագա փուլում հարմարեցնել դրանց կցորդման մակարդակը,

12) անվադողերի պարամետրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը ստանդարտ պիտակի տեսքով հավանաբար կազդի վերջնական սպառողների կողմից ավելի անվտանգ, քիչ աղմկող ու վառելիքի խնայողությամբ ավելի արդյունավետ անվադողեր գնելու որոշումներ կայացնելու վրա: Սա իր հերթին կարող է խրախուսել

անվադողերի արտադրողներին օպտիմալացնել այդ անվադողերի պարամետրերը, որը կարող է ճանապարհ հարթել ավելի կայուն սպառման և արտադրության համար,

13) անդամ պետություններում անվադողերի պիտակավորման մասին բազմաթիվ կանոնները կարող են սահմաններ ստեղծել միջհամայնքային առևտրի համար և ավելացնել վարչական բեռը և անվադողերի արտադրողների համար փորձաստուգման ծախսերը,

14) Փոխարինող անվադողերը կազմում են անվադողերի շուկայի 78 %–ը: Այդ պատճառով անհրաժեշտ է վերջնական սպառողներին տեղեկացնել փոխարինող անվադողերի պարամետրերի մասին, ինչպես նաև անվադողերի մասին, որոնք կարող են տեղադրվել նոր ավտոմեքենաներում,

15) Անվադողերի վառելիքի արդյունավետության և այլ պարամետրերի վերաբերյալ ավելի մեծ տեղեկատվության անհրաժեշտությունը է զգացվում սպառողների, ինչպես նաև նավատորմի ղեկավարների, տրանսպորտային ոլորտի ընկերությունների համար, որոնք չեն կարող հեշտությամբ համեմատել տարբեր անվադողերի ապրանքանիշերի պարամետրերը՝ պիտակավորման և ներդաշնակեցված փորձաստուգման ռեժիմի բացակայության պարագայում: Այդ պատճառով անհրաժեշտ է ընդգրկել C1, C2 և C3 դասակարգի անվադողերը սույն Կանոնակարգի շրջանակում,

16) Էներգիայի պիտակը, որը դասակարգում է ապրանքատեսակը "Ա"–ից "Է" սանդղակի համաձայն, ինչպես կիրառվում է կենցաղային սարքավորումների դեպքում՝ 1992 թվականի սեպտեմբերի 22–ի «Կենցաղային սարքավորումների կողմից էներգասպառման և այլ ռեսուրսների վերաբերյալ պիտակավորման և ստանդարտ արտադրանքի մասին տեղեկատվության նշման մասին» Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգի համաձայն, հայտնի է սպառողների կողմից և համարվում է հաջողված մեթոդ ավելի արդյունավետ սարքավորումները խթանելու համար: Միևնույն նախագիծը պետք է օգտագործվի անվադողերի վառելիքի արդյունավետության պիտակավորման համար,

17) Վաճառքի կետում անվադողերի վրա, ինչպես նաև գովազդային բնույթի տեխնիկական նյութերում պիտակի ցուցադրումը պետք է ապահովի, որ առաքողները, ինչպես նաև պոտենցիալ վերջնական սպառողները ստանան անվադողերի վառելիքի արդյունավետության, թաց պայմաններում կցորդման մակարդակը և պտույտի արտաքին աղմուկի մասին ներդաշնակեցված տեղեկատվություն գնման որոշումը կայացնելու ժամանակ և գնման վայրում,

18) Որոշ վերջնական սպառողներ անվադողերն ընտրում են մինչև վաճառքի կետ հասնելը կամ գնում են անվադողերը էլ. փոստով պատվերի միջոցով: Պիտակներ պետք է ցուցադրվեն գովազդային բնույթի տեխնիկական նյութերում, ներառյալ երբ այդ նյութը հասանելի է ինտերնետում՝ ապահովելու, որ վերջնական սպառողները նաև տեղեկացված ընտրություն կատարեն՝ անվադողերի վառելիքի արդյունավետության, թաց պայմաններում կցորդման մակարդակը և պտույտի աղմուկի վերաբերյալ տեղեկատվության հիման վրա: Գովազդային բնույթի տեխնիկական տեղեկատվությունը չի ներառում տախտակի վրա դրված հայտարարություններում, թերթերում, ամսագրերում, ռադիոյի, հեռուստատեսության և նման առցանց ֆորմատով գովազդը,

19) պոտենցիալ վերջնական սպառողներին պետք է տեղեկատվություն տրամադրվի՝ բացատրելով պիտակի յուրաքանչյուր բաղկացուցիչ մասը և դրա համապատասխանությունը: Այս տեղեկատվությունը պետք է տրամադրվի գովազդային բնույթի տեխնիկական նյութերում, օրինակ, մատակարարների ինտերնետային կայքերում,

20) Տեղեկատվությունը պետք է տրամադրվի ներդաշնակեցված փորձաստուգման մեթոդների համապատասխան, որոնք պետք է լինեն վստահելի, ճշգրիտ և վերարտադրելի, որպեսզի հնարավորություն տան վերջնական սպառողներին համեմատել տարբեր անվադողեր և սահմանափակել արտադրողների համար փորձաստուգման ծախսերը,

21) Ջերմոցի գազի արտանետումները նվազեցնելու համար և ճանապարհային տրանսպորտի անվտանգությունը բարելավելու համար՝ անդամ պետությունները կարող են խրախուսական միջոցներ ձեռնարկեն վառելիքը ավելի շատ խնայող, անվտանգ և ցածր աղմուկ առաջացնող անվադողերի օգտին: Անհրաժեշտ է, որ նվազագույն վառելիքի արդյունավետություն և թաց պայմաններում կցորդման դասակարգեր սահմանվեն, որոնց չհամապատասխանելու դեպքում նման խրախուսական միջոցներ չեն տրամադրվի՝ ներքին շուկայի մասնատումից խուսափելու համար: Նման խրախուսական միջոցները կարող են համարվել պետության աջակցություն: Սույն Կանոնակարգը չպետք է հակասի պետության ապագա ցանկացած օգնության ընթացակարգին, որը կարող է ձեռնարկվել Պայմանագրի 87 և 88 հոդվածների համաձայն նման խրախուսական միջոցների հետ կապված և չպետք է ընդգրկի հարկային և ֆինանսական այլ հարցերը,

22) Մատակարարների և առաքողների կողմից պիտակավորման վերաբերյալ դրույթների պահպանությունը կարևոր է այդ դրույթների նպատակներն իրագործելու և Համայնքում հավասար մրցակցային պայմաններ ապահովելու համար: Անդամ պետությունները

այսպիսով պետք է դիտարկեն նման համապատասխանությունը շուկայի վերահսկողության միջոցով և պարբերաբար ցուցադրումից հետո հսկողության միջոցով, մասնավորապես Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հուլիսի 9–ի թիվ 765/2008 (ԵՀ) կանոնակարգի համաձայն, որը սահմանում է ակրեդիտացիայի և շուկայի վերահսկողության պահանջները՝ ապրանքների շուկայահանման վերաբերյալ,

23) անդամ պետությունները պետք է զերծ մնան, սույն Կանոնակարգի համապատասխան դրույթներն իրականացնել, այնպիսի միջոցառումներ ձեռնարկել, որոնք չարդարացված, բյուրոկրատական և լայնածավալ պարտականություններ են դնում փոքր և միջին ձեռնարկությունների վրա,

24) Անվադողերի մատակարարները և առաքիչները պետք է խրախուսվեն, որպեսզի գործեն սույն Կանոնակարգի դրույթների համաձայն մինչև 2012 թվականը պիտակի ճանաչումը արագացնելու և դրանից բխող օգուտից օգտվելու համար,

25) սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկման գծով լիազորությունների իրականացման կարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշման համաձայն [7],

26) Մասնավորապես, Հանձնաժողովը պետք է լիազորված լինի պահանջներ ներմուծել C2 և C3 դասակարգի անվադողերի՝ թաց պայմաններում կցորդման մակարդակի վերաբերյալ, դասակարգել մասնավորապես ձյան և սառը պայմանների համար նախատեսված անվադողերը՝ ըստ կցորդման աստիճանի, ինչպես նաև համապատասխանեցնել հավելվածները, ներառյալ փորձաստուգման մեթոդները և համապատասխան նորմաները, տեխնիկական առաջընթացին: Քանի որ այդ ակտերն ընդհանուր բնույթ են կրում և նախատեսված են սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու և ի թիվս այլոց, այն նոր, ոչ էական տարրերով լրացնելու համար, ապա դրանք պետք է ընդունվեն թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա հոդվածով նախատեսված ուսումնասիրություն ներառող կարգավորման ընթացակարգի համաձայն,

27) Գնահատելու համար վերջնական սպառողների կողմից պիտակը հասկանալը և շուկան փոխակերպելու սույն Կանոնակարգի հնարավորությունը՝ պետք է իրականացվի սույն Կանոնակարգի վերանայում:

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

*Հոդված 1*

**Նպատակը և առարկան**

1. Սույն Կանոնակարգի նպատակն է բարձրացնել ճանապարհային տրանսպորտի անվտանգությունը, տնտեսական և բնապահպանական արդյունավետությունը՝ խթանելով վառելիքի արդյունավետությունը և անվտանգ անվադողերը՝ աղմուկի ցածր մակարդակով:

2. Սույն Կանոնակարգը շրջանակ է ստեղծում անվադողերի պարամետրերի վերաբերյալ ներդաշնակեցված տեղեկատվություն տրամադրելու համար պիտակավորման միջոցով՝ թույլ տալով վերջնական սպառողներին տեղեկացված ընտրություն կատարել անվադողերը գնելու ժամանակ:

*Հոդված 2*

**Գործողության ոլորտը**

1. Սույն Կանոնակարգը վերաբերում է C1, C2 և C3 դասակարգի անվադողերին:

2. Սույն Կանոնակարգը չի կիրառվում հետևյալի նկատմամբ՝

ա) արտաճանապարհային անվադողեր,

բ) արտաճանապարհային մասնագիտական անվադողեր,

գ) անվադողեր, որոնք նախատեսված են մինչև 1990 թվականի հոկտեմբերի 1–ը գրանցված ավտոմեքենաների համար,

դ) T տեսակի ժամանակավոր օգտագործման պահեստային անվադողեր,

ե) անվադողեր, որոնց արագությունը 80կմ/ժ–ից պակաս է,

զ) անվադողեր, որոնց անվահեծի նոմինալ տրամագիծը չի գերազանցում 254 մմ–ն կամ 635 մմ է կամ ավելի,

է) Անվադողեր, որոնք ունեն լրացուցիչ սարքեր, որոնք ուղղված են անվադողերի կցորդման հատկության բարելավմանը, ինչպիսին են օրինակ սեպավոր անվադողերը,

ը) անվադողեր, որոնք նախագծված են միայն այն ավտոմեքենաների համար, որոնք պատրաստված են միայն ավտոմրցարշավների համար:

*Հոդված*

**Սահմանումները**

Սույն Կանոնակարգի իմաստով՝

1. «C1, C2 և C3 դասակարգի անվադողերը» նշանակում են այն անվադողերի դասակարգերը, որոնք սահմանվում են թիվ 661/2009 Կանոնակարգի 8–րդ հոդվածով:

2. «T տեսակի ժամանակավոր օգտագործման պահեստային անվադողեր» նշանակում է ժամանակավոր օգտագործման պահեստային անվադողեր, որոնք նախագծված են սղաճի ժամանակ օգտագործելու դեպքում, որն ավելի բարձր է, քան ստանդարտ կամ ամուր անվադողերի դեպքում:

3. «Վաճառքի կետ» նշանակում է այն վայրը, որտեղ ցուցադրվում են կամ պահեստավորվում են անվադողերը և վաճառքի են առաջարկվում վերջնական սպառողներին, ներառյալ ավտոմեքենաների ցուցադրման սենյակները, որտեղ վերջնական սպառողներին առաջարկվում են անվադողեր, որոնք տեղադրված չեն ավտոմեքենաների մեջ:

4. «Գովազդային բնույթի տեխնիկական նյութ» նշանակում է տեխնիկական ձեռնարկները, տեղեկաթերթիկները, թուղթ–ներդիրները, կատալոգները (անկախ այն բանից, թե դրանք տպագրված են, էլեկտրոնային կամ առցանց), ինչպես նաև ինտերնետային կայքերը, որոնց նպատակն է անվադողերը շուկայահանել վերջնական սպառողների կամ առաքողների համար և նկարագրել անվադողի տեխնիկական կոնկրետ պարամետրերը:

5. «տեխնիկական փաստաթուղթ» նշանակում է անվադողերի վերաբերյալ տեղեկատվությունը, ներառյալ արտադրողի և անվադողի ապրանքանիշի վերաբերյալ, անվադողի տեսակի նկարագրությունը կամ ըստ վառելիքի արդյունավետության դասակարգի, թաց պայմաններում կցորդման դասակարգի և պտույտի արտաքին աղմուկի դասակարգի և չափման միավորի՝անվադողերի տեսակը, փորձաստուգման հաշվետվությունների և փորձաստուգման ճշտության համաձայն անվադողերի տեսակը:

6. «արտադրող» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն արտադրում է արտադրատեսակ կամ հանձնարարել է արտադրատեսակի նախագծումը կամ արտադրումը և իր անվան կամ ապրանքային նշանի տակ շուկայահանում է արտադրատեսակը:

7. «ներմուծող» նշանակում է Համայնքի ներսում հիմնադրված որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը երրորդ երկրից արտադրատեսակ է ներմուծում Համայնքի շուկա:

8. «լիազորված ներկայացուցիչ» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը գրանցված է Համայնքում, ով գրավոր մանդատ է ստացել արտադրողի կողմից իր անունից հանդես գալու կոնկրետ հանձնարարությունների դեպքում՝ սույն Կանոնակարգի համաձայն վերջինիս պարտականությունների մասով:

9. «մատակարար» նշանակում է արտադրող կամ նրա լիազորված ներկայացուցիչը Համայնքում կամ ներմուծողը:

10. «առաքիչ» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ մատակարարման շղթայում, ոչ մատակարարը կամ ներմուծողը, ով անվադողը հասանելի է դարձնում շուկայում:

11. «շուկայում հասանելի դարձնել» նշանակում է բաշխման համար առևտրային գործունեության ընթացքում Համայնքի շուկայում արտադրատեսակի մատակարարում կամ օգտագործում՝ վճարի դիմաց կամ անվճար:

12. «վերջնական սպառող» նշանակում է հաճախորդ, ինչպես նաև նավատորմի ղեկավարները կամ ճանապարհային տրանսպորտային կազմակերպությունները, որոնք գնում են կամ ակնկալվում է, որ կգնեն անվադողեր:

13. «էական պարամետր» նշանակում է անվադողի պարամետր, ինչպիսին է պտույտին հակազդելը, թաց պայմաններում կցորդման մակարդակը կամ պտույտի արտաքին աղմուկի ձայնը, որը զգալի ազդեցություն ունի շրջակա միջավայրի, ճանապարհային անվտանգության կամ առողջության վրա օգտագործման ժամանակ:

*Հոդված 4*

**Անվադողերի մատակարարների պարտականությունները**

1. Առաջարկողները պետք է ապահովեն, որ C1 և C2 դասակարգի անվադողերը, որոնք տրամադրվում են առաքիչներին կամ վերջնական սպառողներին

ա) անվադողի վրա ունենան փակցված թերթիկ, որը ցույց է տալիս վառելիքի արդյունավետության դասակարգը՝ I հավելվածի Ա մասով սահմանված կարգով, պտույտի արտաքին աղմուկը և չափման միավորը, ինչպես սահմանված է I հավելվածի Գ մասով և անհրաժեշտության դեպքում թաց պայմաններում կցորդման աստիճանը, ինչպես սահմանված է I հավելվածի Բ մասով:

կամ

բ) Տրամադրված միևնույն տեսակի անվադողերի մեկ կամ մի քանի խմբաքանակը ուղեկցվում են տպագրված տեսքով պիտակով, որը ցույց է տալիս վառելիքի արդյունավետության դասակարգը՝ I հավելվածի Ա մասով սահմանված կարգով, արտաքին պտույտի աղմուկը և չափման միավորը, ինչպես սահմանված է I հավելվածի Գ մասով և անհրաժեշտության դեպքում թաց պայմաններում կցորդման աստիճանը, ինչպես սահմանված է I հավելվածի Բ մասով:

2. պարբերությունում նշված փակցված թերթիկի և պիտակի ձևը պետք է համապատասխանի II հավելվածին:

3. Մատակարարները պետք է գովազդային բնույթի տեխնիկական նյութերում նշեն C1, C2 և C3 դասակարգերի անվադողերի վառելիքի արդյունավետության դասակարգը, պտույտի արտաքին աղմուկի դասակարգը և չափման միավորը և համապատասխան դեպքում թաց պայմաններում կցորդման մակարդակը:

4. Մատակարարները պետք է պահանջվելու դեպքում անդամ պետությունների իշխանություններին հասանելի դարձնեն տեխնիկական փաստաթղթերը 5 տարվա ընթացքում այն բանից հետո, երբ տրված անվադողերի տեսակի վերջին անվադողը հասանելի է շուկայում: Տեխնիկական փաստաթղթերը պետք է լինեն բավականին մանրակրկիտ, որպեսզի թույլ տան իշխանություններին ճշտել պիտակի վրա նշված վառելիքի արդյունավետության, թաց պայմաններում կցորդման մակարդակի և պտույտի արտաքին աղմուկի վերաբերյալ տեղեկատվության իսկությունը:

*Հոդված 5*

**Անվադողերի առաքիչների պարտականությունները**

1. Առաքիչները ապահովում են, որ

ա) անվադողերը, վաճառքի կետում, ունենան պարզ տեսանելի ձևով փակցված թերթիկ, որը տրամադրվում է մատակարարների կողմից՝ 4(1)(ա) հոդվածի համաձայն:

կամ

բ) անվադողի վաճառքից առաջ 4(1)(բ) հոդվածում նշված պիտակը ցուցադրված է վերջնական սպառողներին և պարզորեն ցուցադրված է անվադողին շատ մոտ, վաճառքի կետում:

2. Եթե վաճառքի անվադողերը տեսանելի չեն վերջնական սպառողներին, առաքիչները պետք է վերջնական սպառողներին տեղեկատվություն տրամադրեն վառելիքի արդյունավետության դասակարգի, թաց պայմաններում կցորդման մակարդակի և պտույտի արտաքին աղմուկի դասակարգի և այդ անվադողերի չափման միավորի վերաբերյալ:

3. C1, C2 և C3 դասակարգի անվադողերի դեպքում, առաքիչները պետք է նշեն վառելիքի արդյունավետության դասակարգը, պտույտի արտաքին աղմուկի դասակարգը և չափման միավորը և համապատասխան դեպքում, թաց պայմաններում կցորդման մակարդակը ինչպես սահմանված է I հավելվածով կամ գնման ժամանակ վերջնական սպառողներին հաշվի ներկայացման ժամանակ:

*Հոդված 6*

**Ավտոմեքենաների մատակարարների և առաքիչների պարտականությունները**

Երբ վերջնական սպառողներին ընտրություն է առաջարկվում վաճառքի կետում տարբեր անվադողերի՝ ավտոմեքենայի մեջ տեղադրվելու մասին, որոնք նրանք պատրաստվում են ձեռք բերել, ավտոմեքենաների մատակարարները և առաքիչները պետք է վաճառքից առաջ նրանց տրամադրեն տեղեկատվություն առաջարկված յուրաքանչյուր անվադողի վերաբերյալ, C1, C2 և C3 դասակարգի անվադողերի վառելիքի արդյունավետության դասակարգի, պտույտի արտաքին աղմուկի դասակարգի և չափման միավորի և համապատասխան դեպքում, թաց պայմաններում կցորդման մակարդակի վերաբերյալ, ինչպես նշված է I հավելվածում և III հավելվածով սահմանված կարգով: Այդ

տեղեկատվությունը պետք է ներառվի առնվազն գովազդային բնույթի տեղեկատվական նյութում:

*Հոդված 7*

**Ներդաշնակեցված փորձաստուգման մեթոդներ**

Վառելիքի արդյունավետության դասակարգի, պտույտի արտաքին աղմուկի դասակարգի և չափման միավորի և համապատասխան դեպքում, թաց պայմաններում կցորդման մակարդակի վերաբերյալ տեղեկատվությունը, որը պետք է տրամադրվի 4, 5 և 6 հոդվածների համաձայն պետք է ձեռք բերվի I հավելվածում նշված ներդաշնակեցված փորձաստուգման մեթոդների կիրառմամբ:

*Հոդված 8*

**Ստուգման ընթացակարգը**

Անդամ պետությունները պետք է գնահատեն հայտարարված վառելիքի արդյունավետության և թաց պայմաններում կցորդման մակարդակի մասին տեղեկատվության համապատասխանությունը, I հավելվածի Ա և Բ մասերի իմաստով և հայտարարված արտաքին պտույտի աղմուկի դասակարգի և չափման միավորը I հավելվածի Գ մասի իմաստով՝ IV հավելվածով սահմանված ընթացակարգի համաձայն:

*Հոդված 9*

**Ներքին շուկա**

1. Եթե սույն Կանոնակարգի պահանջները բավարարվում են, անդամ պետությունները պետք է ոչ արգելեն, ոչ էլ սահմանափակեն 2–րդ հոդվածում նշված անվադողերի՝ շուկայում հասանելի լինելը արտադրատեսակի մասին տեղեկատվության հիման վրա:

2. Հակառակն ապացուցող փաստերի բացակայության դեպքում, անդամ պետությունները պետք է համարեն, որ պիտակները և արտադրատեսակի մասին տեղեկատվությունը համապատասխանում է սույն Կանոնակարգին: Նրանք կարող են պահանջել, որ

մատակարարները տեխնիկական փաստաթղթեր տրամադրեն՝ 4(4) հոդվածի համաձայն՝ հայտարարված արժեքների և դասերի ճշգրտությունը գնահատելու համար:

*Հոդված 10*

**Խրախուսական միջոցներ**

Անդամ պետությունները խրախուսական միջոցներ չեն տրամադրում Գ դասակարգից ցածր անվադողերի վառելիքի արդյունավետության կամ թաց պայմաններում կցորդման մակարդակի վերաբերյալ I հավելվածի համապատասխանաբար Ա և Բ մասերի իմաստով: Հարկային և ֆինանսական միջոցները չեն համարվում խրախուսական միջոցներ սույն Կանոնակարգի իմաստով:

*Հոդված 11*

**Մեկնաբանությունները և համապատասխանեցումը տեխնիկական առաջընթացին**

Հետևյալ միջոցառումները, որոնք նախատեսված են սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, մասնավորապես լրացումներ կատարելու համար, պետք է ընդունվեն 13(2) հոդվածում նշված մանրամասն ուսումնասիրություն պահանջող կարգավորիչ ընթացակարգի համաձայն: (ա) տեղեկատվության պահանջների ներմուծումը C2 և C3 դասակարգի անվադողերի՝ թաց պայմաններում կցորդման մակարդակի վերաբերյալ, պայմանով, որ հարմարեցված ներդաշնակեցված փորձաստուգման մեթոդները հասանելի են,

(բ) անհրաժեշտության դեպքում կցորդման մակարդակի հարմարեցումը անվադողերի տեխնիկական առանձնահատկություններին, այն անվադողերի, որոնք առաջին հերթին նախագծվել են սառցե և (կամ) ձյան պայմանների ժամանակ ավտոմեքենայի շարժը սկսելու, պահպանելու և կանգնեցնելու հնարավորության առումով սովորական տեսակի անվադողից ավելի լավ աշխատելու համար:

(գ) I և IV հավելվածների համապատասխանեցումը տեխնիկական առաջընթացին:

*Հոդված 12*

**Կիրարկումը**

Թիվ 765/2008 (ԵՀ) կանոնակարգի համաձայն անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իշխանությունները, որոնք պատասխանատու են շուկայի վերահսկողության համար ճշգրտեն համապատասխանությունը՝սույն Կանոնակարգի 4, 5 և 6–րդ հոդվածներին:

*Հոդված 13*

**Կոմիտեի աշխատակարգը**

1. Հանձնաժողովին աջակցում է Կոմիտեն:

2. Սույն պարբերությանը հղում կատարելու դեպքում կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) հոդվածները և 7-րդ հոդվածը՝ հաշվի առնելով այդ որոշման 8–րդ հոդվածի դրույթները:

Հոդված 14

**Վերանայումը**

1. Հանձնաժողովը պետք է գնահատի սույն Կանոնակարգի վերանայման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով, մասնավորապես՝

ա) վերջնական սպառողների կողմից իրազեկվածության առումով պիտակի արդյունավետությունը, մասնավորապես արդյոք 4(1)(բ) հոդվածի դրույթները այնքան արդյունավետ են, որքան Article 4(1)(ա) հոդվածը՝ սույն Կանոնակարգի նպատակների իրագործմանը նպաստելու առումով:

բ) արդյոք պետք է ընդլայնել պիտակավորման սխեման՝ արտաճանապարհային անվադողերն ընդգրկելու համար:

գ) արդյոք պետք է ներմուծել անվադողերի նոր պարամետրեր, ինչպիսին է վազքը:

դ) Անվադողերի պարամետրերի մասին տեղեկատվությունը, որը տրամադրվում է ավտոմեքենաների մատակարարների և առաքիչների կողմից վերջնական սպառողներին:

2. Հանձնաժողովը պետք է Եվրոպական պառլամենտին և Խորհրդին ներկայացնի այս գնահատման արդյունքը ոչ ուշ քան 2016 թվականի մարտի 1–ը և անհրաժեշտության դեպքում առաջարկություններ ներկայացնի Եվրոպական պառլամենտին և Խորհրդին:

*Հոդված 15*

**Անցումային դրույթը**

4 և 5–րդ հոդվածները չեն կիրառվում այն անվադողերի նկատմամբ, որոնք արտադրվել են մինչև 2012 թվականի հուլիսի 1–ը:

*Հոդված 16*

**Ուժի մեջ մտնելը**

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում հրապարակումից հետո 20-րդ օրը:

Սույն Կանոնակարգը կիրառվում է 2012 թվականի նոյեմբերի 1-ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Ստրասբուրգում, 2009 թվականի նոյեմբերի 25-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ՝

Ժ. Բուզեկ

Խորհրդի կողմից՝

Նախագահ՝

Ա. Տորստենսոն

[1] ՊՏ C 228, 22.09.2009թ., էջ 81:

4 ) Եվրոպական պառլամենտի 2009 թվականի ապրիլի 22–ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել), Խորհրդի 2009 թվականի նոյեմբերի

20–ի ընդհանուր դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել) և Եվրոպական պառլամենտի 2009 թվականի նոյեմբերի 24–ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

3] ՊՏ թիվ L 200, 31.7.2009թ., էջ 1:

4] ՊՏ թիվ L 189, 18.7.2002թ., էջ 12:

5] ՊՏ թիվ L 297, 13.10.1992թ., էջ 16:

6] ՊՏ թիվ L 218, 13.8.2008թ., էջ 30:

7] ՊՏ թիվ L 184, 17.7.1999թ., էջ 23:

*ՀԱՎԵԼՎԱԾ I*

## ԱՆՎԱԴՈՂԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Մաս Ա Վառելիքի արդյունավետության դասակարգեր

Վառելիքի արդյունավետության դասակարգը պետք է որոշվի պտույտի հակազդման գործակցի (RRC) հիման վրա՝ ստորև նշված «Ա»–ից «Է» սանդղակի համաձայն և չափվի ՄԱԿ–ի ԵՏՀ կոնվենցիայի թիվ 117 Կանոնակարգի և դրա հետագա փոփոխությունների համաձայն:

Եթե անվադողի տեսակը հաստատվում է մեկից ավելի անվադողի դասակարգի համար (օր. C1 և C2), աստիճանման սանդղակը, որն օգտագործվում է այս տեսակի անվադողի վառելիքի արդյունավետության դասակարգը որոշելու համար նույնը պետք է լինի, ինչը կիրառելի է անվադողի ամենաբարձր դասակարգի համար (օր. C2, ոչ C1):

C1 դասակարգի անվադողեր| C2 դասակարգի անվադողեր| C3 դասակարգի անվադողեր|

RRC kg/t–ի դեպքում| էներգասպառման դասակարգը | RRC kg/t–ի դեպքում| էներգասպառման դասակարգը | RRC kg/t–ի դեպքում| էներգասպառման դասակարգը |

RRC ≤ 6,5 | Ա | RRC ≤ 5,5 | Ա | RRC ≤ 4,0 | Ա |

6,6 ≤ RRC ≤ 7,7 | Բ | 5,6 ≤ RRC ≤ 6,7 | Բ | 4,1 ≤ RRC ≤ 5,0 | Բ |

7.8 ≤ RRC ≤ 9.0 | Գ | 6.8 ≤ RRC ≤ 8.0 | Գ | 5.1 ≤ RRC ≤ 6.0 | Գ |

Դատարկ | Դ | Դատարկ| Դ | 6,1 ≤ RRC ≤ 7,0 | Դ |

9,1 ≤ RRC ≤ 10,5 | Ե | 8,1 ≤ RRC ≤ 9,2 | Ե | 7,1 ≤ RRC ≤ 8,0 | Ե |

10.6 ≤ RRC ≤ 12.0 | Զ | 9.3 ≤ RRC ≤ 10.5 | Զ | 8.1 ≤ RRC ≤ 5,0 | Զ |

RRC ≥ 12,1 | Է | RRC ≥ 10,6 | Է| Դատարկ | Է |

Մաս Բ Թաց պայմաններում կցորդման դասակարգեր

C1 դասակարգի անվադողերի՝ թաց պայմաններում կցորդման դասակարգը պետք է սահմանվի թաց պայմաններում կցորդման մակարդակի ինդեքսի (Է) հիման վրա՝ ստորև նշված «Ա»–ից «Է» սանդղակի համաձայն և չափվի ՄԱԿ–ի ԵՏՀ կոնվենցիայի թիվ 117 Կանոնակարգի և դրա հետագա փոփոխությունների համաձայն:

Է | Թաց պայմաններում կցորդման դասակարգեր

1,55 ≤ G | Ա |

1,40 ≤ Է ≤ 1,54 | Բ |1,25 ≤ G ≤ 1,39 | Գ |

Դատարկ |Դ |

1,10 ≤ G ≤ 1,24 | Ե |

G ≤ 1,09 | Զ|

Դատարկ | Է |

Մաս Գ Պտույտի արտաքին աղմուկի դասակարգը և չափման միավորը

Պտույտի արտաքին աղմուկի չափման միավորը (N) պետք է հայտարարվի դեցիբելով և հաշվարկվի ՄԱԿ–ի ԵՏՀ կոնվենցիայի թիվ 117 Կանոնակարգի և դրա հետագա փոփոխությունների համաձայն:

Պտույտի արտաքին աղմուկի դասակարգը պետք է որոշվի սահմանային նորմաների (LV) հիման վրա, որը հետևյալ կերպ սահմանվում է թիվ 661/2009 կանոնակարգի (ԵՀ) II հավելվածի Գ մասով՝

N dB–ում | պտույտի արտաքին աղմուկի դասակարգ |

N ≤ LV – 3 | |

LV – 3 < N ≤ LV | |

N > LV | |

*ՀԱՎԵԼՎԱԾ II*

**ՊԻՏԱԿԻ ՁԵՎԱՉԱՓԸ**

1. Պիտակի նախագիծը

1.1. 4(1) և 5(1) հոդվածներում նշված պիտակը պետք է համապատասխանի ստորև ներկայացված ձևին:

1.2. Հետևյալը ներկայացնում է պիտակի համար տեխնիկական նկարագիրը՝

1.3. Պիտակը պետք է լինի առնվազն 75 մմ լայնությամբ և 110 մմ բարձրությամբ: Երբ պիտակը տպագրվում է ավելի մեծ ձևաչափով, դրա բովանդակությունը պետք է այնուամենայնիվ համամասնական մնա վերը նշված տեխնիկական նկարագրին:

1.4. Պիտակը պետք է բավարարի հետևյալ պահանջները՝

(ա) Գույներն են CMYK– երկնագույն, ծիրանեգույն, դեղին և սև և ներկայացվում են հետևյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00՝ 0 % երկնագույն, 70 % ծիրանեգույն, 100 % դեղին, 0 % սև:

(բ) Ստորև բերված թվերը վերաբերում են 1.2 կետում նշված նկարագրություններին՝

Վառելիքի արդյունավետություն

Գրաֆիկական պատկերները, ինչպես ներկայացվում են՝ լայնությունը՝ 19.5 մմ, բարձրությունը՝ 18,5 մմ–գրաֆիկական պատկերի շրջանակը՝նրբագիծ 3.5 pt, լայնությունը՝ 26մմ, բարձրությունը՝ 23մմ– աստիճանավորման համար շրջանակը՝ նրբագիծ՝ 1pt–շրջանակի վերջը՝ նրբագիծ՝3,5 pt, լայնությունը՝ 36մմ–Գույնը՝X-10-00-05,

Թաց պայմաններում կցորդում

Գրաֆիկական պատկերները, ինչպես ներկայացվում են՝ լայնությունը՝ 19մմ, բարձրությունը՝ 19մմ–գրաֆիկական պատկերի շրջանակը Նրբագիծ՝3.5 pt, լայնությունը՝ 26մմ, բարձրությունը՝ 23մմ– աստիճանավորման համար շրջանակը՝ նրբագիծ՝ 1pt–շրջանակի վերջը՝ նրբագիծ՝3,5 pt, լայնությունը՝ 26մմ–Գույնը՝X-10-00-05,

Արտաքին պտույտի աղմուկ

Գրաֆիկական պատկերները, ինչպես ներկայացվում են՝ լայնությունը՝ 14 մմ, բարձրությունը՝ 15մմ– աստիճանավորման համար շրջանակը՝ նրբագիծ՝ 3.5pt, լայնությունը՝26մմ, բարձրությունը՝24մմ––արժեքի համար շրջանակ՝ նրբագիծ՝ 1pt, շրջանակի վերջը՝ նրբագիծ՝3,5 pt, բարձրությունը՝ 24մմ–Գույնը՝X-10-00-05,

Պիտակի ծայրը՝ Նրբագիծ՝ 1,5 pt –Գույնը՝X-10-00-05,

«Ա»–ից «Գ» սանդղակի վրա

Սլաքներ. բարձրությունը՝ 4.75մմ, բաց հատված՝ 0.75մմ, սև նրբագիծ՝0.5pt–գույներ՝

- A:X-00-X-00,

- B:70-00-X-00,

- C:30-00-X-00,

- D:00-00-X-00,

- E:00-30-X-00

- F:00-70-X-00,

- G:00-X-X-00:

Տեքստը՝Helvetica Bold 12 pt, 100 % սպիտակ, սև ուրվագիծ՝ 0,5 pt;

Աստիճանավորում

Սլաքներ. լայնությունը՝ 16մմ, բարձրությունը՝10մմ, 100 % սև,

Տեքստը՝Helvetica Bold 27 pt, 100 % սպիտակ,

Սանդղակի վրա գծերը՝ Նրբագիծ՝ 0,5 pt, գծիկավոր բաժանք՝ 5,5 մմ, 100 % սև,

Տեքստը՝Helvetica Bold 11 pt, 100 % սև,

Պտույտի արտաքին աղմուկի չափման միավորը

Սլաք. լայնությունը՝ 25մմ, բարձրությունը՝10մմ, 100% սև, տեքստը՝ Helvetica Bold 20 pt,100 % սպիտակ

Տեքստի միավորը՝ Helvetica Bold 13 pt, 100 % սպիտակ,

ԵՄ լոգո՝ լայնությունը՝ 9մմ, բարձրությունը՝ 6մմ

Կարգավորման հղում՝ Helvetica Regular 7,5 pt,100 % սև,

Անվադողի դասակարգի հղում՝ Helvetica Bold 7,5 pt,100 % սև,

Պտույտի արտաքին աղմուկի դասակարգը ինչպես ներկայացված է I հավելվածի Գ մասում՝ լայնությունը՝ 8,25 մմ, բարձրությունը՝ 15.5մմ–100% սև

(գ) Ֆոնը պետք է սպիտակ լինի:

1.5. Անվադողի դասակարգը (C1 կամ C2) պետք է նշված լինի պիտակի վրա 1.2 կետում նշված նկարագրի համաձայն:

2. Փակցվող թերթիկ

2.1. 4(1) և 5(1) հոդվածներում նշված փակցվող թերթիկը բաղկացած է երկու մասից՝ (i) պիտակ, որը տպագրված է սույն հավելվածի 1–ին կետում և (ii) տեղ ապրանքանիշի համար, որը տպագրվում է սույն հավելվածի 2.2 կետում նշված նկարագրի համաձայն:

2.2. Ապրանքանիշի տեղ՝ Մատակարարները պետք է պիտակի հետ մեկտեղ փակցվող թերթիկի վրա ավելացնեն իրենց ապրանքային նշանը կամ անունը, անվադողի գիծը, անվադողի տրամագիծը, բեռի ինդեքսը, արագությունը և այլ տեխնիկական նկարագիր՝ ցանկացած գույնի, ձևաչափի և նախագծի համաձայն՝ պայմանով, որ սա չի նվազեցնում կամ չի խաթարում պիտակի վրա սույն Հավելվածի 1 կետի համաձայն նշված տեքստը: Փակցվող թերթիկի ընդհանուր մակերեսը չպետք է գերազանցի 250 սմ2 և թերթիկի ընդհանուր բարձրությունը չպետք է գերազանցի 220մմ–ն:

*ՀԱՎԵԼՎԱԾ III*

**Գովազդային բնույթի տեխնիկական նյութերում տրամադրված տեղեկատվությունը**

1. Անվադողերի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է տրամադրվի ստորև նշված կարգով՝

(i) վառելիքի արդյունավետության դասակարգ ( "Ա"–ից "Է" տառ),

(ii) թաց պայմաններում կցորդման դասակարգ ( "Ա"–ից "Է" տառ)

(iii) Պտույտի արտաքին աղմուկի դասակարգը և չափման միավորը(dB):

2. 1–ին կետում նշված տեղեկատվությունը պետք է բավարարի հետևյալ պահանջները՝

i) հեշտությամբ կարդացվի,

(ii) հեշտությամբ հասկացվի,

(iii) Եթե տվյալ անվադողի տեսակի համար չափերի և այլ պարամետրերի աստիճանավորման այլ համակարգ է գործում, պետք է նշվի ամենավատ և ամենալավ շահագործվող անվադողի տիրույթը:

3. Մատակարարները պետք է նաև հետևյալ տեղեկատվությունը հասանելի դարձնեն իրենց ինտերնետային կայքերում՝

(i)Սույն Կանոնակարգի վերաբերյալ Հանձնաժողովի համապատասխան ինտերնետային կայքին,

(ii) Պիտակի վրա տպագրված գրաֆիկական պատկերների բացատրությունը,

(iii) նշում, որը շեշտում է այն փաստը, որ վառելիքի փաստացի խնայողությունը և ճանապարհային անվտանգությունը մեծ մասամբ կախված է վարորդների վարքագծից և մասնավորապես հետևյալ հարցերից՝

–Էկո–վարումը կարող է զգալիորեն նվազեցնել վառելիքի սպառումը,

–անվադողի ճնշումը պետք է պարբերաբար ստուգվի, որպեսզի թաց պայմաններում կցորդման մակարդակը և վառելիքի արդյունավետության շահագործումը օպտիմալացվի,

–մինչև կանգառ տարածքը պետք է միշտ խստորեն պահպանել,

*ՀԱՎԵԼՎԱԾ IV*

**Ստուգման ընթացակարգը**

Հայտարարված վառելիքի արդյունավետության, թաց պայմաններում կցորդման մակարդակի, ինչպես նաև հայտարարված պտույտի արտաքին աղմուկի դասակարգի և չափման միավորի հետ համապատասխանությունը պետք գնահատվի յուրաքանչյուր տեսակի անվադողի կամ անվադողերի խմբաքանակի համար, ինչպես որոշված է մատակարարի կողմից՝ հետևյալ որևէ ընթացակարգի համաձայն՝

(ա) (i) մեկ անվադողը սկզբում պետք է փորձաստուգվի: Եթե չափման միավորը համապատասխանում է հայտարարված դասակարգին կամ պտույտի արտաքին աղմուկի չափման միավորին, փորձաստուգումը համարվում է անցած,

և

(ii) եթե չափման միավորը չի համապատասխանում հայտարարված դասակարգին կամ պտույտի արտաքին աղմուկի չափման միավորին, երեք այլ անվադող է փորձաստուգվում: Փորձաստուգված չորս անվադողերից ծագող չափման միջին միավորը օգտագործվում է հայտարարված տեղեկատվության հետ համապատասխանությունը գնահատելու համար,

կամ

(բ) երբ պիտակավորված դասակարգերը կամ արժեքները ծագում են տեսակը հաստատող փորձաստուգման արդյունքների հիման վրա, որոնք ձեռք են բերվում 2001/43/ԵՀ հրահանգի, թիվ 661/2009 Կանոնակարգի (ԵՀ) կամ ՄԱԿ–ի ԵՏՀ թիվ 117 Կանոնակարգի և դրանց հետագա փոփոխությունների համաձայն, անդամ պետությունները կարող են այս անվադողերի տեսակների հաստատումից օգտագործել անվադողերի արտադրության տվյալների համապատասխանությունը:

Արտադրման տվյալների համապատասխանության գնահատումը պետք է հաշվի առնի նորմաները, ինչպես նշված է ՄԱԿ–ի ԵՏՀ–ի թիվ 117 Կանոնակարգի 8–րդ հոդվածում և դրա հետագա փոփոխություններում: